ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12 մարտի 2025թ.

Ժամը 11:30

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Արմեն Խաչիբաբյան

Անդամներ՝ Վահագն Հովհաննիսյան, Տիրան Խաչատրյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդը չկայացած հայտարարելու մասին

1.1 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ դիզելային գեներատորների ձեռքբերման նպատակով, սույն թվականի փետրվարի 25-ին, գնումների eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով, հայտարարվել էր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգ, ըստ որի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված էր 07.03.2025թ.-ին, ժամը 11:00-ին, իսկ հետադարձ աճուրդը նախատեսված էր 10.03.2025թ.-ին, ժամը 11:00-ին:

1.2 Հիմք ընդունելով՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 11.03.2025թ.-ի թիվ 03/26-1/5538-2025 գրությունը (գրությունը կցվում է), որով տեղեկացվում է, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ժամանակ համակարգը խափանվել է և նշված ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

1.3 Հաշվի առնելով վերը նշվածը՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, նորից հայտարարել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ հատուկ միջոցների ձեռքբերման գնման ընթացակարգը նույն չափանիշներով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նախագահ՝ _____ Ա. Խաչիբաբյան

Քարտուղար՝ _____ Ն. Աբովյան

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ Վ. Հովհաննիսյան

2. _____ Տ. Խաչատրյան